ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

թիվ 43-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 2-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշման 1-ին կետով հաստատված կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023թ. հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունում ղեկավար կազմի կողմից քաղաքացիների ընդունելության ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 2-Լ հրամանի 2-րդ կետը լրացնել նոր ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«1) Քաղաքացիներն ընդունելության կարող են գրանցվել նաև www.e-requst.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի «Ամրագրել այց» բաժնի միջոցով: Այս դեպքում ընդունարանի ծառայողն ուսումնասիրում է հարցի էությունը,

ըստ հարցի բնույթի ճշտում ընդունելությունն իրականացնող պաշտոնատար անձի տվյալները, ընդունելության օրն ու ժամը և տեղեկացնում ընդունելություն հայցող քաղաքացուն: Ընդունարանի ծառայողը ընդունելության դիմումների կատարումը ըստ անհրաժեշտության կարող է փոխանցել նաև ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակա ստորաբաժանումներին:

2) ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության միջոցով «Մալբրի» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում կատարել համապատասխան կարգաբերումներ»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

«25» 09 2023թ.

ք.Երևան